

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.2-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Համայնքը փոխառու միջոցներ կարող է ներգրավել միայն ներքին աղբյուրներից:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-7.3-րդ մասերով.

«7.1. Հանրային ենթակառուցվածք է հանրային հետաքրքրություն կամ շահ ներկայացնող հիմնական միջոցը (այդ թվում՝ շենքեր, կառուցվածքներ, սարքավորումներ) կամ ոչ նյութական ակտիվը, որն օգտագործվում է հանրային ծառայությունների մատուցման նպատակով (կամ դրա առնչությամբ):

7.2. Հանրային ծառայություն է հանրային շահերից բխող գործունեությունը, որը իրականացվում է պետական մարմինների կողմից կամ վերջիններիս անունից կամ որի իրականացման համար պատասխանատու է պետական մարմինը, ինչպես նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի իմաստով հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի ցանկացած ծառայությունը կամ գործունեությունը:

7.3. Պայմանագրային պայմանական պարտավորությունը հանրային ենթակառուցվածքների շահագործման, կառուցման, բարելավման կամ տեխնիկական սպասարկման նպատակով պետության կողմից կնքված պայմանագրերից բխող պայմանական պարտավորություններն են, բացառությամբ գնումները կարգավորող օրենսդրության համաձայն կնքված պայմանագրերի:»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Բյուջետային երաշխիքները

1. Բյուջետային երաշխիքը պարտավորություն է, որով երաշխավորվում է բյուջետային երաշխիք ստացող անձի նկատմամբ համայնքի, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև օտարերկրյա պետության, միջազգային կազմակերպության պարտքային պարտավորությունների պատշաճ կատարումը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

2. Ներքին բյուջետային երաշխիքները Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին կառավարության կողմից տրամադրված բյուջետային երաշխիքներն են:

3. Արտաքին բյուջետային երաշխիքները ոչ ռեզիդենտներին կառավարության կողմից տրամադրված բյուջետային երաշխիքներն են:

4. Երաշխավորված պարտքային պարտավորությունների չկատարմամբ պայմանավորված գումարները վճարվում են պետական բյուջեով նախատեսված պահուստային ֆոնդի միջոցների հաշվին և արտացոլվում առանձին տողով:

5. Բյուջետային երաշխիքները տրամադրվում են կառավարության որոշման հիման վրա: Բյուջետային երաշխիքը կազմվում է առանձին փաստաթղթի ձևով և ստորագրվում է միայն պետական լիազորված մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի կողմից: Այլ գրավոր գործարքներում նախատեսված երաշխիքի մասին դրույթներն իրավական ուժ չունեն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դրույթների:

6. Բյուջետային երաշխիքների տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը՝ սույն օրենքին համապատասխան:

7. Համայնքները չեն կարող տրամադրել բյուջետային երաշխիքներ:

8. Բյուջետային երաշխիքներ կարող են տրամադրվել Հայաստանի Հանրապետության այն ռեզիդենտ իրավաբանական անձանց համար, որոնք ներկայացնում են կառավարության ծրագրերից բխող նպատակային ծրագրի կատարման համար անհրաժեշտ և վարկի տեսքով պահանջվող գումարների հիմնավորում, որը պետք է ներառի, մասնավորապես, ծրագրի իրավական հիմքը, բովանդակությունը, խնդիրներն ու նպատակը, կատարման փուլերը և ժամկետները, վարկի վերադարձելիության ու օգտագործման դիմաց հաշվարկվող տոկոսների վճարման հնարավորության հիմնավորումը, ինչպես նաև վարկի մարման ժամանակացույցը, ծրագրի նախահաշիվը և ծախսերը հիմնավորող հաշվարկները:

9. Բյուջետային երաշխիքի գումարը երաշխիքի տրամադրման համար դիմելու պահին չպետք է գերազանցի այն իրավաբանական անձի ակտիվների 20 տոկոսը, որի համար բյուջետային երաշխիքը տրամադրվում է: Սույն սահմանափակումը կիրառելի չէ, եթե՝

1) երաշխիքով ներգրավվող վարկային միջոցներն օգտագործվելու են պետական կարիքների, ներառյալ՝ պետական պահուստի կարիքների համար գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ֆինանսավորման համար.

2) երաշխիքը տրամադրվում է տնտեսական ճգնաժամային իրավիճակներում պետության ռազմավարական խնդիրները լուծելուն ուղղված ծրագրերին ֆինանսավորում ապահովելու համար՝ վարկատուների կողմից այլ ապահովության միջոցներ չընդունելու դեպքում:

10. Այն անձինք, որոնց համար տրամադրվել են բյուջետային երաշխիքներ, երաշխիքային ծրագրի ավարտից հետո պետական բյուջե պետք է վճարեն միջնորդավճար՝ երաշխիքային գումարի 1 տոկոսի չափով: Բյուջետային երաշխիքների տրամադրման դիմաց, բացի միջնորդավճարից, պետական բյուջեի օգտին կարող են գանձվել այլ վճարներ:

11. Պետական լիազորված մարմինն իրավասու է մինչև երաշխավորված պարտքային պարտավորությունը մարելը բյուջետային երաշխիքի տրամադրման պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով ստուգելու ստացողի ֆինանսական վիճակը:

12. Կառավարության կողմից տրամադրված բյուջետային երաշխիքների հետ կապված հարկաբյուջետային ռիսկերի վերաբերյալ պետական լիազորված մարմինը յուրաքանչյուր տարի պատրաստում է վերլուծություն, որտեղ նկարագրվում է տրամադրված բյուջետային երաշխիքների կառուցվածքը և գնահատվում են դրանից ածանցվող ռիսկերը: Հարկաբյուջետային ռիսկերի վերաբերյալ վերլուծությունը ներառվում է պետական բյուջեի ուղերձում:

13. Երաշխիքների վճարմամբ Հայաստանի Հանրապետության մոտ ծագում է հետադարձ պահանջի իրավունք:»:

Հոդված 3. Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասում «11 հոդվածի երրորդ մասի երկրորդ պարբերության և չորրորդ մասի» բառերը փոխարինել «11-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ, 10-րդ մասերի և 21-րդ հոդվածի 8.5-րդ մասի «2-րդ կետի» բառերով:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ3» կետով.

«բ3) սույն օրենքի 21-րդ հոդվածի 8.5-րդ մասի 3-րդ եւ 4-րդ կետերով սահմանված նոր պարտավորությունները՝ առկայության դեպքում.»:

Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.5-րդ, 8.6-րդ և 8.7-րդ մասերով.

«8.5. Պետության պարտավորությունների նկատմամբ սահմանվում են նաև հետևյալ պահանջները.

1) որոշակի պահի դրությամբ տրամադրված եւ չմարված բյուջետային երաշխիքների հանրագումարը չպետք է գերազանցի նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 20 տոկոսը,

2) տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը,

3) սույն հոդվածի 8.2-րդ մասի «գ» կետով նախատեսված դեպքում տվյալ տարվա ընթացքում կառավարության կողմից արգելվում է ստանձնել պայմանագրային պայմանական որեւէ նոր պարտավորություն կամ բյուջետային երաշխիքներից բխող որեւէ նոր պարտավորություն, բացառությամբ եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքում,

4) եթե նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքի, պայմանագրային պայմանական պարտավորությունների եւ բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների հանրագումարը Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի նկատմամբ գերազանցել է 70 տոկոսը, ապա տվյալ տարվա ընթացքում կառավարության կողմից արգելվում է ստանձնել պայմանագրային պայմանական որեւէ նոր պարտավորություն կամ բյուջետային երաշխիքներից բխող որեւէ նոր

պարտավորություն, բացառությամբ եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքում:

8.6. Սույն հոդվածի 8.5-րդ մասի իմաստով՝ պայմանագրային պայմանական նոր պարտավորությունների եւ բյուջետային երաշխիքներից բխող նոր պարտավորությունների ստանձնում է համարվում նաեւ գործող պարտավորությունների այնպիսի փոփոխությունները, որոնք հանգեցնում են պայմանագրային պայմանական պարտավորությունների եւ բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների աճի:

8.7. Սույն հոդվածի 8.5-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված՝ բյուջետային երաշխիքների հաշվարկում չեն ներառվում առաջնային գրավով ապահովված այն բյուջետային երաշխիքները, որոնց առաջնային ապահովման առարկայի գնահատած շուկայական արժեքն առնվազն հավասար է բյուջետային երաշխիքի 120%-ի:»:

Հոդված 6. Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) տեղեկություններ կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարությամբ ամրագրված ուղենշային ցուցանիշների և փոխառությունների տարեկան ծրագրի կատարողականի վերաբերյալ.»:

2) «դ2» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ3», «դ4» և «դ5» կետերով.

«դ3) տեղեկություններ բյուջետային երաշխիքների մասին, այդ թվում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների հանրագումարը, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում ստանձնած բյուջետային երաշխիքներից բխող նոր պարտավորությունները: Սույն կետի իմաստով՝ բյուջետային երաշխիքներից բխող նոր պարտավորությունների ստանձնում է համարվում նաև գործող պարտավորությունների այնպիսի փոփոխությունները, որոնք հանգեցնում են բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների աճի.

դ4) տեղեկություններ պետության՝ համաձայն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի և դրա հիման վրա ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (ՀՀՀՀՍ)» իմաստով ծառայությունների մատուցման կոնցեսիոն

համաձայնություններից բխող պարտավորությունների մասին, այդ թվում՝ հաշվետու տարվա ընթացքում ստանձնած այդպիսի համաձայնություններից բխող նոր պարտավորությունները: Սույն կետի իմաստով՝ կոնցեսիոն համաձայնություններից բխող նոր պարտավորությունների ստանձնում է համարվում նաև գործող պարտավորությունների այնպիսի փոփոխությունները, որոնք հանգեցնում են կոնցեսիոն համաձայնություններից բխող պարտավորությունների աճի:

դ5) տեղեկություններ պայմանագրային պայմանական պարտավորությունների մասին, այդ թվում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ պետության պայմանագրային պայմանական պարտավորությունների հանրագումարը.»:

Հոդված 7. Օրենքի 41.3-րդ հոդվածի 5-րդ մասի «բ» կետից հանել «, ինչպես նաև պետության կողմից թողարկված մուրհակների» բառերը:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ**

Կ-1141՝-26.08.2025-ՖՎ-011/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1.2-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Համայնքը փոխառու միջոցներ կարող է ներգրավել միայն ներքին աղբյուրներից:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-7.3-րդ մասերով.

«7.1. Հանրային ենթակառուցվածք է հանրային հետաքրքրություն կամ շահ ներկայացնող հիմնական միջոցը (այդ թվում՝ շենքեր, կառուցվածքներ, սարքավորումներ) կամ ոչ նյութական ակտիվը, որն օգտագործվում է հանրային ծառայությունների մատուցման նպատակով (կամ դրա առնչությամբ):

7.2. Հանրային ծառայություն է հանրային շահերից բխող գործունեությունը, որը իրականացվում է պետական մարմինների կողմից կամ վերջիններիս անունից կամ որի իրականացման համար պատասխանատու է պետական մարմինը, ինչպես նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի իմաստով հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտի ցանկացած ծառայությունը կամ գործունեությունը:

7.3. Պայմանագրային պայմանական պարտավորությունը հանրային ենթակառուցվածքների շահագործման, կառուցման, բարելավման կամ տեխնիկական սպասարկման նպատակով պետության կողմից կնքված պայմանագրերից բխող պայմանական պարտավորություններն են, բացառությամբ գնումները կարգավորող օրենսդրության համաձայն կնքված պայմանագրերի:»:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Բյուջետային երաշխիքները

1. Բյուջետային երաշխիքը պարտավորություն է, որով երաշխավորվում է բյուջետային երաշխիք ստացող անձի նկատմամբ համայնքի, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև օտարերկրյա պետության, միջազգային կազմակերպության պարտքային պարտավորությունների պատշաճ կատարումը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

2. Ներքին բյուջետային երաշխիքները Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին կառավարության կողմից տրամադրված բյուջետային երաշխիքներն են:

3. Արտաքին բյուջետային երաշխիքները ոչ ռեզիդենտներին կառավարության կողմից տրամադրված բյուջետային երաշխիքներն են:

4. Երաշխավորված պարտքային պարտավորությունների չկատարմամբ պայմանավորված գումարները վճարվում են պետական բյուջեով նախատեսված պահուստային ֆոնդի միջոցների հաշվին և արտացոլվում առանձին տողով:

5. Բյուջետային երաշխիքները տրամադրվում են կառավարության որոշման հիման վրա: Բյուջետային երաշխիքը կազմվում է առանձին փաստաթղթի ձևով և ստորագրվում է միայն պետական լիազորված մարմնի ղեկավարի կամ նրա ժամանակավոր պաշտոնակատարի կողմից: Այլ գրավոր գործարքներում նախատեսված երաշխիքի մասին դրույթներն իրավական ուժ չունեն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դրույթների:

6. Բյուջետային երաշխիքների տրամադրման կարգը սահմանում է կառավարությունը՝ սույն օրենքին համապատասխան:

7. Համայնքները չեն կարող տրամադրել բյուջետային երաշխիքներ:

8. Բյուջետային երաշխիքներ կարող են տրամադրվել Հայաստանի Հանրապետության այն ռեզիդենտ իրավաբանական անձանց համար, որոնք ներկայացնում են կառավարության ծրագրերից բխող նպատակային ծրագրի կատարման համար անհրաժեշտ և վարկի տեսքով պահանջվող գումարների հիմնավորում, որը պետք է ներառի, մասնավորապես, ծրագրի իրավական հիմքը, բովանդակությունը, խնդիրներն ու նպատակը, կատարման փուլերը և ժամկետները, վարկի վերադարձելիության ու օգտագործման դիմաց հաշվարկվող

տոկոսների վճարման հնարավորության հիմնավորումը, ինչպես նաև վարկի մարման ժամանակացույցը, ծրագրի նախահաշիվը և ծախսերը հիմնավորող հաշվարկները:

9. Բյուջետային երաշխիքի գումարը երաշխիքի տրամադրման համար դիմելու պահին չպետք է գերազանցի այն իրավաբանական անձի ակտիվների 20 տոկոսը, որի համար բյուջետային երաշխիքը տրամադրվում է: Սույն սահմանափակումը կիրառելի չէ, եթե՝

1) երաշխիքով ներգրավվող վարկային միջոցներն օգտագործվելու են պետական կարիքների, ներառյալ՝ պետական պահուստի կարիքների համար գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ֆինանսավորման համար.

2) երաշխիքը տրամադրվում է տնտեսական ճգնաժամային իրավիճակներում պետության ռազմավարական խնդիրները լուծելուն ուղղված ծրագրերին ֆինանսավորում ապահովելու համար՝ վարկատուների կողմից այլ ապահովության միջոցներ չընդունելու դեպքում:

10. Այն անձինք, որոնց համար տրամադրվել են բյուջետային երաշխիքներ, երաշխիքային ծրագրի ավարտից հետո պետական բյուջե պետք է վճարեն միջնորդավճար՝ երաշխիքային գումարի 1 տոկոսի չափով: Բյուջետային երաշխիքների տրամադրման դիմաց, բացի միջնորդավճարից, պետական բյուջեի օգտին կարող են գանձվել այլ վճարներ:

11. Պետական լիազորված մարմինն իրավասու է մինչև երաշխավորված պարտքային պարտավորությունը մարելը բյուջետային երաշխիքի տրամադրման պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով ստուգելու ստացողի ֆինանսական վիճակը:

12. Կառավարության կողմից տրամադրված բյուջետային երաշխիքների հետ կապված հարկաբյուջետային ռիսկերի վերաբերյալ պետական լիազորված մարմինը յուրաքանչյուր տարի պատրաստում է վերլուծություն, որտեղ նկարագրվում է տրամադրված բյուջետային երաշխիքների ~~պարտքերը~~ կառուցվածքը և գնահատվում են դրանից ածանցվող ռիսկերը: Հարկաբյուջետային ռիսկերի վերաբերյալ վերլուծությունը ներառվում է պետական բյուջեի ուղերձում:

13. Երաշխիքների վճարմամբ Հայաստանի Հանրապետության մոտ ծագում է հետադարձ պահանջի իրավունք:»:

Հոդված 3. Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասում «11 հոդվածի երրորդ մասի երկրորդ պարբերության և չորրորդ մասի» բառերը փոխարինել «11-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ, 10-րդ մասերի և 21-րդ հոդվածի 8.5-րդ մասի ~~«գ»~~**2-րդ** կետի » բառերով:

Հոդված 4. Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «բ3» կետով.

«բ3) սույն օրենքի 21-րդ հոդվածի 8.5-րդ մասի ~~«գ»~~**3-րդ** եւ ~~«դ»~~**4-րդ** կետերով սահմանված նոր պարտավորությունները՝ առկայության դեպքում.»:

Հոդված 5. Օրենքի 21-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.5-րդ, **8.6-րդ** և **8.7-րդ** մասերով.

«8.5. Պետության պարտավորությունների նկատմամբ սահմանվում են նաև հետևյալ պահանջները.

ա1) որոշակի պահի դրությամբ տրամադրված եւ չմարված բյուջետային երաշխիքների հանրագումարը չպետք է գերազանցի նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 20 տոկոսը,

բ2) տվյալ բյուջետային տարում երաշխավորվող պարտավորությունների ընդհանուր գումարը (բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված միջազգային պայմանագրերով նախատեսված երաշխիքների) չի կարող գերազանցել նախորդ բյուջետային տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների 10 տոկոսը,

գ3) սույն հոդվածի 8.2-րդ մասի «գ» կետով նախատեսված դեպքում տվյալ տարվա ընթացքում կառավարության կողմից արգելվում է ստանձնել պայմանագրային պայմանական որեւէ նոր պարտավորություն կամ բյուջետային երաշխիքներից բխող որեւէ նոր պարտավորություն, բացառությամբ եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է **տվյալ տարվա Ազգային Ժողովի կողմից հաստատված** պետական բյուջեի մասին օրենքում,

դ4) եթե նախորդ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքի, պայմանագրային պայմանական պարտավորությունների եւ բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների հանրագումարը Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի նկատմամբ գերազանցել է 70 տոկոսը, ապա տվյալ

տարվա ընթացքում կառավարության կողմից արգելվում է ստանձնել պայմանագրային պայմանական որեւէ նոր պարտավորություն կամ բյուջետային երաշխիքներից բխող որեւէ նոր պարտավորություն, բացառությամբ եթե այդ նոր պարտավորությունը ներառվում է տվյալ տարվա Ազգային ժողովի կողմից հաստատված պետական բյուջեի մասին օրենքում:

8.6. Սույն հոդվածի 8.5-րդ մասի իմաստով՝ պայմանագրային պայմանական նոր պարտավորությունների եւ բյուջետային երաշխիքներից բխող նոր պարտավորությունների ստանձնում է համարվում նաեւ գործող պարտավորությունների այնպիսի փոփոխությունները, որոնք հանգեցնում են պայմանագրային պայմանական պարտավորությունների եւ բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների աճի:

8.7. Սույն հոդվածի 8.5-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված՝ բյուջետային երաշխիքների հաշվարկում չեն ներառվում առաջնային գրավով ապահովված այն բյուջետային երաշխիքները, որոնց առաջնային ապահովման առարկայի գնահատած շուկայական արժեքն առնվազն հավասար է բյուջետային երաշխիքի 120%-ի:»:

Հոդված 6. Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասում է

2) «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) տեղեկություններ կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարությամբ ամրագրված ուղենշային ցուցանիշների և փոխառությունների տարեկան ծրագրի կատարողականի վերաբերյալ.»:

2) «դ2» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «դ3», «դ4» և «դ5» կետերով.

«դ3) տեղեկություններ բյուջետային երաշխիքների մասին, այդ թվում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների հանրագումարը, ինչպես նաև հաշվետու տարվա ընթացքում ստանձնած բյուջետային երաշխիքներից բխող նոր պարտավորությունները: Սույն կետի իմաստով՝ բյուջետային երաշխիքներից բխող նոր պարտավորությունների ստանձնում է համարվում նաև գործող պարտավորությունների այնպիսի փոփոխությունները, որոնք հանգեցնում են բյուջետային երաշխիքներից բխող պարտավորությունների աճի.

դ4) տեղեկություններ պետության՝ համաձայն «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» օրենքի և դրա հիման վրա

ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (ՀՀՀՀՍ)» իմաստով ծառայությունների մատուցման կոնցեսիոն համաձայնություններից բխող պարտավորությունների մասին, այդ թվում՝ հաշվետու տարվա ընթացքում ստանձնած այդպիսի համաձայնություններից բխող նոր պարտավորությունները: Սույն կետի իմաստով՝ կոնցեսիոն համաձայնություններից բխող նոր պարտավորությունների ստանձնում է համարվում նաև գործող պարտավորությունների այնպիսի փոփոխությունները, որոնք հանգեցնում են կոնցեսիոն համաձայնություններից բխող պարտավորությունների աճի:

դ5) տեղեկություններ պայմանագրային պայմանական պարտավորությունների մասին, այդ թվում՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ պետության պայմանագրային պայմանական պարտավորությունների հանրագումարը.»:

Հոդված 7. Օրենքի 41.3-րդ հոդվածի 5-րդ մասի «բ» կետից հանել «, ինչպես նաև պետության կողմից թողարկված մուրհակների» բառերը:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ
([Կ-1141-26.08.2025-ՖՎ-011/1](#)) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությու նը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	Կառավարություն	Նախագիծ	Օրենքի ամբողջ տեքստում առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ կառավարություն)» և «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» ձևակերպումները՝ իրենց հոլովաձևերով փոխարինել «կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ սահմանված հասկացությունը, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	2-րդ, 4-7-րդ գլուխներ	2-րդ, 4-7-րդ գլուխների վերնագրերն առաջարկում ենք համապատասխանեցնել բովանդակությունը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված դրույթը:	Ընդունվել է	Ընդունվել է

3.	Կառավարություն	2-րդ հոդված	Պետական պարտքի կառավարման հասկացությունը՝ որը սահմանված է նախագծի 8-րդ հոդվածի 1-ում, առաջարկում ենք տեղափոխել և սահմանել նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝ նպատակ ունենալով ապահովել օրենքով սահմանված հասկացությունների ամբողջականությունը, ինչպես նաև հիմք ընդունելով Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դրույթը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ 2-րդ հոդվածը լրացվել է նոր 8-րդ մասով բովանդակությամբ՝ «8) պետական պարտքի կառավարում՝ գործընթաց, որն իրականացվում է փոխառու միջոցների ներգրավման, վերաձևակերպման, մարման և սպասարկման ծրագրերի մշակման և իրականացման միջոցով՝ սույն օրենքի 8-րդ հոդվածով սահմանված նպատակների շրջանակներում.» Ըստ այդմ մասերի համարակալումը վերանայվել է.	Ընդունվել է	Ընդունվել է
4.	Կառավարություն	6-րդ հոդված	Հիմք ընդունելով ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ քննարկման արդյունքներով ձեռք բերված պայմանավորվածությունները՝ 6-րդ հոդվածում առաջարկում ենք պայմանական պարտավորությունների կազմից հանել մուրհակներին առնչվող դրույթները և այս մասով գործող կարգավորումները թողնել անփոփոխ՝	Ընդունվել է	Ընդունվել է

			մուրհակով հավաստվող պարտավորությունների բնույթն առավել խորքային ուսումնասիրելու նկատառումով: Նշված պարտավորությունների մասով պատշաճ հաշվետվողականությունն ապահովելու նպատակով համապատասխան օրենսդրական փոփոխությամբ Կենտրոնական բանկին տրամադրված մուրհակները կարտացույցվեն միջնաժամկետ ծախսերի ծրագրում: Հաշվի առնելով վերոգրյալը 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ և 3-րդ մասերը առաջարկում ենք հանել:		
5.	Կառավարություն	1. 8-րդ հոդված 2. 8-րդ հոդվածից հետո լրացվող նոր 9-րդ հոդված	1. Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հասկացությունն առաջարկում ենք սահմանել նախագծի 2-րդ հոդվածում՝ լրացնելով այն որպես նոր 8-րդ մաս, 2. 8-րդ հոդվածի 4-րդ մասը առաջարկում ենք շարադրել նոր հոդվածով, ինչպես նաև հոդվածի վերնագիրը համապատասխանեցնել բովանդակությանը՝ հիմք ընդունելով Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դրույթները ըստ որի՝ հոդվածների վերնագրերը պետք է համապատասխանեն հոդվածների բովանդակությանը: Հաշվի առնելով վերը նշվածը նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է որպես նոր 9-րդ հոդված:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			Ըստ այդմ հոդվածների համարակալումը վերանայվել է		
6.	Կառավարություն	10-րդ (Լրամշակված 11-րդ) հոդվածի 4-րդ մաս	Իրավական որոշակիության սկզբունքն ապահովելու նպատակով առաջարկում ենք հստակեցնել 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված լիազորող նորմը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները: Վերոգրյալը հաշվի առնելով 10-րդ (Լրամշակված 11-րդ) հոդվածի 4-րդ մասում «մարմիններն իրենց կողմից սահմանված» բառերի փոխարեն առաջարկում ենք լրացնել «մարմինները համայնքի ավագանու սահմանած» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
7.	Կառավարություն	1. 5-ՐԴ ԳԼՈՒՒՍ 2. 14-րդ (Լրամշակված 15-րդ) հոդվածի 2-րդ մաս	1. 5-րդ գլխի վերնագիրը խմբագրել հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը. «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ» բառերի փոխարեն լրացնել «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՊԱՐՏՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ» բառերը: 2. Կարգավորումների ամբողջականությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք կառավարության պարտքի կառավարման վերաբերյալ հաշվետվության պահանջի մասին դրույթը հանել և այն սահմանել նախագծերի փաթեթի «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

			մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի 6-րդ հոդվածում՝ որպես բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության կազմում ներառվող տեղեկությունների բաղկացուցիչ: Հոդվածի մասերի համարակալումը վերանայվել է:		
8.	Կառավարություն	6-ՐԴ ԳԼՈՒԽ	Առաջարկում ենք «ԳԼՈՒԽ 6» և «ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻ ՊԱՐՏՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ» բառերը հանել՝ հիմք ընդունելով 5-րդ գլխի վերնագրում կատարված լրացումը: Օրենքի նախագծի գլուխների համարակալումը վերանայվել է	Ընդունվել է	Ընդունվել է
9.	Կառավարություն	1. 7-րդ (Լրամշակված 6-րդ) գլուխ 2. 16-րդ (Լրամշակված 17-րդ) հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր	1. 7-րդ (Լրամշակված 6-րդ) գլխի վերնագիրը համապատասխանեցնել հոդվածների բովանդակությանը՝ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ» բառերի փոխարեն լրացնել «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՄԱՐՈՒՄԸ» բառերը: 2. Առաջարկում ենք «պարտատոմսերը» բառերը փոխարինել «պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված դրամական միջոցները» բառերով՝ հաշվի առնելով, որ մեթոդաբանական առումով պետական պարտքի ձևավորման լիարժեք աղբյուր հանդիսանում են ոչ թե ինքին պարտատոմսերը, այլ դրանց տեղաբաշխումից ստացված դրամական միջոցները:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է

10.	Կառավարություն	19-րդ (Լրամշակված 20-րդ) հոդվածից	19-րդ (Լրամշակված 20-րդ) հոդվածից առաջարկում ենք վերնագրել որպես նոր 7-րդ գլուխ հետևյալ վերնագրով՝ հաշվի առնելով հոդվածների բովանդակությունը՝ «Գ Լ ՈՒ Խ 7 ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ»	Ընդունվել է	Ընդունվել է
11.	Կառավարություն	Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ	1. Նախագծում «ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բառերը առաջարկում ենք հանել՝ իրավաբանական տեխնիկայի կանոնների պահպանման նպատակով: 2. Իրավական հստակության ապահովման նպատակով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասում «ընդունվելուց հետո» բառերը փոխարինել «ուժի մեջ մտնելուց հետո» բառերով, ինչպես նաև առաջարկում ենք ճշգրտել բացառություն հանդիսացող հոդվածները՝ նոր համարակալումներին համապատասխան:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					
1.	Կառավարություն	2-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող 11-րդ հոդվածի 12-րդ մաս	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող 11-րդ հոդվածի 12-րդ մասում առաջարկում ենք «երաշխիքների պորտֆել» բառերը փոխարինել «երաշխիքների կառուցվածքը» բառերով՝ հասկացության մեկնաբանման անորոշություններից խուսափելու նպատակով:	Ընդունվել է	Ընդունվել է
2.	Կառավարություն	3-րդ, 4-րդ հոդվածներ	Հոդվածներում կատարվել են խմբագրական շտկումներ՝ 2-րդ հոդվածի «բ կետը լրացնել որպես «2-րդ», իսկ 3-րդ հոդվածի՝ «գ» և «դ» կետերը որպես «3-րդ» և «4-րդ» կետեր:	Ընդունվել է	Ընդունվել է

3.	Կառավարություն	5-րդ հոդվածով շարադրվող 8.5- րդ մաս	1. 5-րդ հոդվածով շարադրվող 21-րդ հոդվածի 8.5-րդ մասի «գ» և «դ» կետերում «Ազգային ժողովի կողմից հաստատված» բառերը առաջարկում ենք փոխարինել «տվյալ տարվա» բառերով՝ հաշվի առնելով, որ պետական բյուջեի մասին օրենքը (այնպես՝ ինչպես մյուս բոլոր օրենքները) Ազգային ժողովը ոչ թե «հաստատում է», այլ ընդունում է: Բացի այդ, պետական բյուջեի մասին օրենքի ընդունման կամ հաստատման հանգամանքի շեշտումը տվյալ պարագայում որևէ իրավական ծանրաբեռնվածություն չունի (այն դեպքում, երբ շատ կարևոր է հստակ նշել, թե պետական բյուջեի ո՞ր օրենքի մասին է գնում խոսքը): 2. 5-րդ հոդվածով շարադրվող 8. 5-րդ մասում առկա չհամարակալված պարբերությունները առաջարկում ենք համարակալել որպես «8.6» և «8.7»-րդ մասերի: Նկատի ունենալով որ նշված չհամարակալված պարբերությունները բովանդակային առումով առանձին կարգավորումներ են, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը՝ առաջարկում ենք դրանք լրացնել նոր մասերի տեսքով, 3. 5-րդ հոդվածով շարադրվող 8. 5-րդ մասի վերջին պարբերությունում «Սույն մասի» բառերը փոխարինելով «Սույն հոդվածի 8.5-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերով» բառերով՝ հաշվի առնելով, որ առանց նշված փոփոխության իրականացման տվյալ պարբերությամբ առաջարկվող կարգավորումը կտարածվի նաև բյուջետային երաշխիքներին վերաբերող՝ ներկայումս գործող ֆիսկալ կանոններին, որը գտնում ենք ոչ նպատակահարմար:	Ընդունվել է	Ընդունվել է
				Ընդունվել է	Ընդունվել է
				Ընդունվել է	Ընդունվել է

4.	Կառավարություն	6-րդ հոդված	1. 6-րդ հոդվածում առաջարկում ենք ավելացնել դրույթ՝ հստակեցնելով բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության կազմում ներկայացվող՝ կառավարության պարտքի վերաբերյալ տեղեկությունների բովանդակությունը՝ հաշվի առնելով «Պետական պարտքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 15-րդ (լրամշակված 14-րդ) հոդվածի 2-րդ մասում կատարված փոփոխությունը: Հաշվի առնելով վերոգրյալը՝ 6-րդ հոդվածը լրացվել է նոր 1-ին մասով՝ հետևյալ բովանդակությամբ «1) «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «դ) տեղեկություններ կառավարության պարտքի կառավարման միջնաժամկետ ռազմավարությամբ ամրագրված ուղենշային ցուցանիշների և փոխառությունների տարեկան ծրագրի կատարողականի վերաբերյալ.»: 2. առաջարկում ենք հստակեցնել, թե որ կետից հետո է նախատեսվում լրացնել նոր «դ3», «դ4» եւ «դ5» կետերը՝ պաշտոնական ինկորպորացման ժամանակ խնդիրներից խուսափելու նպատակով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ «1-ին» լրամշակված 2-րդ մասում «լրացնել» բառից առաջ լրացնել «դ2» կետից հետո» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ					

1.	Կառավարություն	2-րդ հոդված	Առաջարկում ենք «3.1-րդ» գրեթե ամբողջությամբ փոխարինել «3.1-ին» գրեթե ամբողջությամբ պահպանելով դասական թվականների կանոնը:	Ընդունվել է	Ընդունվել է
----	----------------	--------------------	--	-------------	-------------